ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«03» 07 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 62

Ձեռնարկողը՝ ***<<Պար Սամ Եղբայրներ>> ՍՊԸ***
Ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչ. Շրջ. Շահումյան 4 փ.

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Տ. Մեծ 55 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրեն՝ Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 62

«03» 07 2018թ.

<<Պար Սամ Եղբայրներ>> ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Տ. Մեծ 55 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	<<Պար Սամ Եղբայրներ>> ՍՊԸ
Նախագծող՝	<<Հ. Ս. ՊՌՈ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Նախնական գնահատման հայտ;
Տեղադրման վայրը՝	Էրեբունի վարչական շրջանի Տ. Մեծ 55
Գործունեության կատեգորիան	/Գ/ կատեգորիա

Համաձայն ներկայացված աշխատանքային նախագծի <<Պար Սամ Եղբայրներ>> ՍՊ ընկերությունը Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Տիգրան Մեծ 55 հասցեում նախատեսում է կառուցել բազմաֆունկցիոնալ համալիր: Նախագիծն իրականացված է, համաձայն ձեռնարկողի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի, ճարտարապետական լուծումների, գործող շինարարական նորմերի և 01.03.2018թ տրված N 01/18-07/2-4087-118 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Համաձայն 15022018-01-0314 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի <<Պար Սամ Եղբայրներ>> ՍՊ ընկերությանը Տիգրան Մեծ 55 հասցեում պատկանող հողամասի մակերեսը կազմում է 1.173456 հա:

Բազմաֆունկցիոնալ համալիրը կազմված է հինգ մասնաշենքից: Բոլոր մասնաշենքերը եռահարկ են երկու նկուղային հարկերով:

Համալիրի գլխավոր մուտքը կազմակերպված է Տ.Մեծ փողոտաի կողմից: Կազմակերպված են ևս երեք երկրորդային մուտքեր Տիգրան Մեծ պողոտայի, Գլինկայի փողոցի և համալիրի ետնամասից, երկրորդ հարկի մակարդակով, փողոցի կողմից:

Ստորգետնյա ավտոկայանատեղերը ունեն մուտքեր և ելքեր Տ. Մեծ պողոտայի կողմից: Ապրանքների մուտքերը նախատեսված է իրականացնել համալիրի ետնամասից, երկրորդ հարկի մակարդակով:

Նկուղային հարկերում բացի ավտոկայանատեղիից նախատեսված են տեխնիկական նշանակության տարածքներ:

Առաջին հարկում նախատեսված են սուպերմարկետը և տաղավարներ:

Երկրորդ հարկում նույնպես նախատեսված են տաղավարներ: Ինչպես նաև համալիրի վարչական հատվածը և ծառայողական անձնակազմին հատկացված տարածքները:

Երկրորդ հարկում է գտնվում մանկական ժամանցի կենտրոնը, դահլիճներ և մանկական առևտրի կենտրոնը:

Երկրորդ և երրորդ հարկերում նախատեսված են նաև սրճարաններ իրենց սպասարկող օժանդակ սենյակներով:

Հարկերի միջև կապը նախատեսված է իրականացնել էսկալատորներով և վերելակի միջոցով:

Հիմնական տեխնիկական ցուցանիշները՝

Հարկայնությունը ՝ 2 ստորգետյա 3 վերգետնյա

Կառուցապատման մակերեսը - 12700 քմ

Վարգետնյա երեք հարկերը - 38100 քմ

Ստորգետբյա երկու հարկերը 25200 քմ

Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում մթնոլորտի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընացքում առաջացող արտանետումներով: Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- շինարարական հրապարակները ցանկապատել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- պարտադիր կարգով շինանյութերը, ավելցուկ գրունտը և շինարարական աղբը տեղափոխել անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել,
- սորուն նյութերը (ավազ, ցեմենտ) պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով,

իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- շինարարության շինարարական տեխնիկայի տեղաշարժը և աշխատանքը իրականացվելու է միայն գոյություն ունեցող ճանապարհներով, բացառելով կանաչ գոտիների վնասումը, նոր տարածքների խախտումը և աղտոտումը:
- բացառվելու է շինարարական աղբի և հողերի կուտակումները բուսածածկ տարածքներում:
- պարբերաբար իրականացվելու է տեխնիկայի շարժիչների կարգաբերում,
- չոր եղանակների ժամանակ իրականացվելու է խճի, պահեստավորված և տեղափոխվող հողային զանգվածների խոնավացում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ աշխատանքները իրականացվելու են ջրային ռեսուրսներից բավականին հեռավորության վրա, կարելի է եզրակացնել, որ թե շինարարության, և թե շահագործմանը ընթացքում որևէ ազդեցություն ջրային ռեսուրսների վրա չի լինի:

Հողածածկին պատճառված վնասները նվազագույնի հասցնելու նպատակով նախատեսված է ընթացքում տարածքի բուսահողը հանել և կուտակվորել պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,

- ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,

- բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:

- շինարարության ավարտից հետո հանված բուսահողն օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրն օգտագործվում է շինարարական հարթակների ջրցանի, ինչպես նաև ինժեներատեխնիկական անձնակազմի, բանվորների և վարորդների կոմունալ կենցաղային կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել և իրականացնել կանաչապատման աշխատանքներ:

<u>Եզրահանգում</u>՝ Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի վերաբերյալ կազմակերպվել են երկու հասարակական լսումներ, որոնց արդյունքում կազմված արձանագրություններով մասնակիցները և ազդակիր համայնքը նախատեսվող գործունեության իրականացմանը տվել են իրենց հավանությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Պար Սամ Եղբայրներ>> ՍՊԸ կողմից ներկայացված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Տ. Մեծ 55 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Մասնագետ՝ Ա. Մինասյան